Զավեն Թաքուլյան

ԶԱՎԵՆ ԹԱՔՈՒԼՅԱՆ

ՀԱՅՐԵՆԻՔ

այաստա՞ն, երկիր դրախտավայր...

Այսքան միայն լսած ու երգած էինք, լավ կհիշեմ, երբ փոքր երեխա էինք։ Երգ մըն էր սա, որ քնքշորեն կթրթռար մեր շրթներուն վրա, երգն էր այն երկրին, որուն, ավա՜ղ, մեր մատղաշ տղեղները չէին հասկցած, և վերջապես, երգ մըն էր սա, որ ամենեն անուշն ու քաղցրն էր մեզ համար...

Բավական տարիներ ետք, որոնք անցան դանդաղորեն օտար երկրի մը մեջ, ըմբռնեցինք, թե այն երկիրը դրախտավայր, զոր Հայաստան կոչած էինք, է մեր հայրենիքը, հայրենիքը հայուն...

Որքա՜ն ցավ պատճառեց մեր մանուկ հոդիներուն, որ դժբախտություն էինք ունեցած չծնվելու և չապրելու մայր հողին վրա։

Մեր ծնողները մեզ պատմեցին ամեն ինչ, պատմեցին, թե ինչո՞ւ դուրս արտաքսված են այդ հարազատ օջախից, պատմեցին թե թուրքն է եղած անհայրենիքության պատճառը...

Այսպես պատմեցին մեր ծնողները, երբ մանուկ էինք մենք...

Ու այդ վայրկյանից զգացինք հայրենիքի կարոտը։ Հայրենիքի արևից, Հայաստանի հողից զրկված ըլլալնիս մեծ վիշտ պատճառեց մեզի՝ այդ մանուկ հասակին։

Ու երգեցինք սիրակարոտ, երգեցինք զայն, կապվեցանք նրան, կարդացինք ու երազեցինք զայն...

Կսահեին տարիներ, տարիներ հայրենաբաղձության, տարիներ օտար երկրներու մեջ։

***

Ու վերջապես ձայն լսվեցավ մեր երկրեն, որ ցնծությամբ լցրեց արտասահմանի ողջ հայրենակարոտ ու վտարանդի հայության սրտերը։ Ձայն մըն էր սա, որով Հայաստանի կառավարությունը աշխարհի չորս ծագերում սփռված հայերը իր հարազատ քաղաքացիները կկոչեր։

Ձայն մըն էր, որ կհնչեր Հայաստանեն, Երևանի ռադիոկայանեն...

Ակսանք հայրենիքը տեսնելու հույս մը շոյել։ Ծագող արևի մը արշալույսն էր սա, որուն առաջին ճառագայթները սկսան նշմարվիլ։

Անկե հետո էր, որ հայրենիքեն եկող ամենաբեր ծիծեռնակները ավետեցին ազգահավաքման հրավերը Հայաստանեն։

Վերջապես 1946 թ. փետրվար 1-ին էր, որ ներգաղթի արձանագրություններն սկսան։

Ի՜նչ անսահման ցնծություն... Չէինք հավատար կարծես...

Ու դարավոր երազն էր սա, որ մարմին կստանար...

Մեր պատմության արյունով գրված էջերը շատ մը բռնի ներգաղթներ արձանագրած

են. բազմաթիվ հայորդիներ, հալածական փախուստ տվին հայրենիքեն, աշխարհի լուսավոր և մութ անկյուններում ինկած, լքեցան անմխիթար և անհույս... ու փչեցին հայրենակարոտ հոգիներն իրենց, աչքերնին բաց, օտար և անհարազատ ափունքներու մեջ։

Սակայն բախտը ժպտաց մեզ։ Կմոտենար երանելի հունիս ամիսը, այն պատմական ամիսը, երբ այնքան երազված ներգաղթի կարավանը պիտի շարժվեր դեպի հոն, դեպի լույս, դեպի Հայաստան, այն ամիսը, որ գաղթականության վերջը և հայրենիքի տեսնելու առաջին օրը պիտի լիներ։

Սրտատրոփ կսպասեինք մեր հերթին. ինքզինքնիս ամենեն երջանիկը պիտի զգայինք, եթե բախտ ունենայինք առաջին կարավանով ներգաղթող ըլլալու... Սակայն մեզի չվիճակվեց այդ, հույսերնիս պահեցինք երկրորդին։

Ու վերջապես 23-ին հունիսի դեպի հայրենիք շարժվեց առաջին կարավանը... 23 հունիսի... դեպի հարազատ ափեր թռչող առաջին ծիծեռնակներու թվական...

Սա էլ ներգաղթ մըն էր... Շատ ներգաղթներ տեսանք, արյուն արցունք լացինք, ամեն մի կարավան անծանոթ ափեր քշվելուց։

Սա էլ կարավան մըն էր, սակայն դեպի լույս և ապահով ապաստան գնացող, ուրեմն ոչ մի անգամ էլ որևէ թշնամի չպիտի կարողանար քշել, վտարել դուրս...։

Երկրորդ կարավանով մեկնիլ _ վիճակվեց մեր ընտանիքին ալ։ Ոչ մի կերպ կարող եմ արտահայտիլ ու նկարագրել այն ուրախությունը, որ զգացինք այդ վայրկյանին։

Հուլիս 10-ին էր, որ մեր նավը շարժվեց դեպի հոն, դեպի երկիրը դրախտավայր, զորմանկության աստեն երգած էի...։

Գրկախառնվեցանք ու լացինք այդ բաժանման պահուն, սակայն սա լաց մըն էր թեթև ու վերջին, լաց մըն էր սա ուրախության, կբաժնվեինք իրարմե հայրենիքի մեջ տեսնվելու համար։

Արագորեն կսահեր «Թրանսիլվանիան» Պեյրութի կապույտ ափերեն... Դիտեցի Պեյրութը վերջին անգամ, գիտեի, որ մանկական ու պատանեկան թարմ հիշատակներ հոն կթաղվեին, սակայն մի քանի օր վերջ հայրենիքի ծոցում պիտի մոռանայի զանոնք ու պիտի սկսվեր նոր կյանք մը նոր եռանդով...։

Ընդարձակ ջուրի տարածություններ ճեղքելով կանցնեինք և կզգայինք մոտեցումը հայրենիքին։

Ու պայծառ առավոտ մը նշմարվեցավ Բաթումի գեղածիծաղ համայնապատկերը, ցնծության աղաղակներ թռան մեր բերանեներեն... Քիչ վերջ, նավն արդեն մտած էր նավահանգիստ։

Առաջին անգամ էր, որ պարզվեցավ մեզ, ապշահար աչքերուն դրոշը կարմիր, կարմիր հողի վրա։

Առաջին անգամ էր, որ լսեցինք Սովետական հիմնը սովետական նվագախումբ է, սովետական հողի վրա...։

Այն երջանկությունը, որ մեր այրած սրտերը ողողեց, սահման չուներ և նույնիսկ ոչ մի բառ չի կարող գտնվիլ նկարագրելու դայն։ Այն պահուն էր, որ առաջին անգամ մեր դպրավոր վշտերը և ցավերը խպառ խույս տվին մեզմէ...։

Նավը արդեն իսկ միացած էր քարափին ու անհամբեր կսպասեինք ցամաք իջնիլ։

Կարգը մերն էր... Ու դանդաղորեն իջանդխամատերեն ու վերջինին վրա կանգնած սլացիկ վերպով հիշեցի այն բոլորը, դիտեցի հողը սովետական ու իջա ցած... Լլեկտրական հոսանքե անցա կարծես...։

Արդեն սովետական հողի վրա էի... համբ քայլերով կառաջանայի դիտելով ծովը ու նավը... մտաբերեցի այն բոլոր ներգաղթները ու այս երջանկաբախ ներգաղթը... հուզվեցա։ Այդ վայրկյանին իսկ այն գաղթականի ցուպը, որ անբաժան եղած էր հյուծող հայության, ծովը նետած էինք կարծես, երբեք ու երբեք զայն չբռնելու հանգստությամբ...

Սովետական հողի վրա էինք հիմա...

Ընտանիքս մանկ գալու պահուն աղբյուր մը նշմարեցինք ու բոլորս առաջին ջուր խմելու բախտը ունեցած լինելու համար խուժեցինք դեպ այդ կողմը, քիչ մնաց, որ խողովակը քանդեինք։

Խմեցինք զայն։ Չեմ գիտեր, ի՞նչպես զիրար դիտեցինք... կարծես փոխված էինք ու անճանաչելի... ի՞նչ քաղցր ջուր, սովետական երկրի ջուրն էր սա...

***

Շոգեկառքը կսուրար Սովետական Վրաստանի կանաչազարդ լեռներու և դաշտերու մեջեն ու ամեն վայրկյան կարծես կզգանք Հայաստանի հոտը...

Կես գիշեր էր, լսեցի մի ձայն, որ կըսեր՝ «Հայաստան հասանք»։ Ընդոստ ցատկեցի տեղես ու գլուխս լուսամուտեն դուրս հանեցի ապշահար...

Անուշ զեփյուռ մըն էր, որ հպեցավ դեմ-

քիս... Սա տարբեր օդ էր, սա հայրենի անուշ հովիկն էր, որ կփչեր ծառերու ընդմիջեն... արծաթափրփուր զետակի կլկլոցն ալ տարբեր ձայն մ՚ուներ կարծես. հայրենի քաղցրիկ ջուրն էր սա...

Կանգ առավ շոգեկառքը մթության մեջ... Սուրբ հողի վրա կանգ էր առած. իջա ցած ու վերցուցի քարը հայրենիքիս, քարը սուրբ, ու տարի շրթներուս...

Երգած ու երազած հայրենիքի քարն էր սա, բարբարոսներու կոխկրտած քարը պապերուս, պանդխտության՝ ատեն մեր այրած հոգիներու դարման ըլլալիք քարը և վերջապես քարն էր այդ երիտասարդ քանհինգ ամյա Հայաստանիս, Սովետական հայրենիքիս քարը, զոր երկյուղածությամբ կհամբուրեի այրած շրթներով...

Ժամերը շարունակ կսահեին ու ահա հայրենի արևը կսկսեր կարմրեցնել լեռներու երկնամերձ գագաթները, որ կարծես վերակենդանություն մը ստացանք կենսատու արեգակի ճառագայթներեն...

Ամեն ինչ նշմարվիլ սկսան. կդիտեի արցունքոտ աչքերով՝ այգիները փռված լանջին վրա լեռներու, ֆաբրիկաները, որոնց բուխերիկներեն ելած բարակ ծուխերը մինչև երկինք կ՚բարձրանային։ Դիտեցի բոլորը, դիտեցի ամեն տեղ ու դիտեցի միշտ։

Անցանք կայարաններ կարգով, ուր հայրենակիցներ եկած էին մեզ ողջագուրելու. վերջապես անսահման անհամբերությենե վերջ կառաջարը դանդաղորեն կմտներ Երևան։

***

Հայրենիքի տաքուկ ծոցում, Երևանի մեջ է, որ կգրեմ, Արարատը դիմացիս։

Երկու ամիս անցել է այն օրեն ու կըզգամ, որ այլևս չեմ այն պատանին, որ օտար երկրի մեջ գիտեր իր անհայրենիք ըլլալը, քաջ գիտեմ, որ հոս չպիտի գտնվեն մարդիկ, որոնք հարցնեն ինձ՝ «Դուք հայրենիք ունի՞ք»։

Ու մենք, երանելիներս, որ գաղթական ու հայրենակարոտ վերջին սերունդը եղանք, նույնպես հայրենիքի ծոցին մեջ ապրելու բախտն ունեցանք։ Բառ կարո՞ղ ենք գտնել արտահայտելու մեր սրտաբուխ և անկեղծ երախտագիտությունը հանդեպ Սովետական հզոր Միության։

Անսահման շնորհակալության տուրքի բաժին մը ալ ունինք մեր քաղցրիկ Հայաստանին, որ նյութական ու բարոյական ամեն զոհողությունները ընդունեց, ամենադժվարին ներգաղթը կազմակերպելու։

Ու մեր մաքուր ու անկեղծ մաղթանքները կընենք հանճարեղ մարդուն, ժողովրդների ազատության Ռահվիրային, մարդասեր մեծ Ստալինին։

Քալե՛ դու, ո՛վ քաղցրիկ մայր Հայաստան։ Ժպտե՛ ավելի, քանի քո վերելքին սատարող, քեզ համար զոհվող որդիներ պիտի լինինք։